ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2026 թվականի թիվ 18-Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄԻ ՄԵԿ ՐՈՊԵԻ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը

1) հանրային տեսալսողական հեռարձակողի

   ա. «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի համար 45 000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ),

   բ. «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի համար 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

2) հանրային լսողական հեռարձակողի համար 1 800 (մեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. փետրվարի 11
ք.Երևան